№ 92 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 2 1902 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 2 № 92

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Չը պէտք է ուշացնել.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Յարգանք դէպի ծառատունկը. Նամակ Հին-Նախիջեւանի գաւառից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պօլսի լրագիրներից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հարստահարվող գիւղացիներ։

ՉԸ ՊԷՏՔ Է ՈՒՇԱՑՆԵԼ

Մենք հաղորդել էինք, որ պատշաճաւոր իշխանութեան թոյլտւութեամբ բացված է հանգանակութիւն հանգուցեալ երաժշտագէտ Կարա-Մուրզայի աշխատութիւնների հրատարակութեան համար, որոնց արդիւնքը կը գործադրվի հանգուցեալի զաւակների ապահովութեան համար։

Մեզ լուրեր են հասնում, որ զանազան տեղերում ժողովվում են գումարներ այդ նպատակով։ «Մշակի» խմբագրութեան մէջ անմիջապէս հաւաքված փողերի մասին մենք տուինք տեղեկութիւններ։ Բագուի այսօրվայ նամակից մեր ընթերցողները կը տեսնեն, որ այնտեղ մի երեկոյթում ժողովված է 300 րուբլի և բացի այդ դիտաւորութիւն կայ դարձեալ երեկոյթ տալ այդ նպատակով։

Մենք յոյս ունենք, որ Կարա-Մուրզայի աշխատութիւնների հրատարակութեան և նրա որբերի ապահովութեան գաղափարը համակրութիւն կը գտնի ամէն տեղ։ Շատ ճիշդ է նկատում Բագուի նամակի հեղինակը, թէ Կովկասի բոլոր քաղաքներում կան բազմաթիւ տիկիններ և օրիորդներ, որոնք Կարա-Մուրզայի աշակերտներն են եղել և որ նրանց աջակցութիւնը կարող է մեծապէս նպաստել գործի աջողութեան։

Ցանկալի է, որ նուիրատուները իրանց նուէրները ներկայացնեն որքան կարելի է շուտ, որպէս զի կարելի լինի աւելի վաղ ձեռնարկել հրատարակութիւններին։ Ժամանակը արագ անցնում է և իւրաքանչիւր օրը բերում է իր պարտաւորութիւնները և գործերը։ Պէտք է աշխատենք այդ գործը արագ կերպով առաջ տանել և կազմակերպվող երգեցիկ խմբերի համար տալ մշակված երաժշտական նիւթեր, որոնց ներկայումս մեծ կարօտութիւն է զգացվում։

Այն մեծ համակրութիւնը, որով մեր հասարակութիւնը վերաբերվում էր դէպի հանգուցեալի կազմակերպած համերգները, այն խորին վիշտը, որ զգաց հասարակութիւնը Կարա-Մուրզայի վաղահաս մահվան առիթով, գրաւական են, որ հանգուցեալ երաժշտագէտի աշխատութիւնների հրատարակութեան գործը պաշտպանութիւն կը գտնի ամէն տեղ և այնքան գումար կը ժողովվի, որ կարելի կը լինի գլուխ բերել համակրելի նպատակը բաւաբար կերպով։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Եռանդոտ, երախտաւոր երաժշտագէտ Կարա-Մուրզայի ցաւալի մահը արձագանք գտաւ եւ Կ. Պօլսում, ուր, ի դէպ ասած, Կարա-Մուրզան եղել է մի քանի տարի։ Բոլոր հայ լրագիրները համակրական յօդուածներ են նուիրել հանգուցեալի յիշատակին։ Ահա ինչ ենք կարդում «Արեւելքի» մէջ.

Հանգուցեալը թերեւս անծանօթ մը մեզի, շատ մեծ համբաւ մը կը վայելէր Կովկասի մէջ, ուր գործունէութեան երկար շրջան մը ունեցած է, երաժշտական թուռնէներ կազմակերպելով տարուէն այլ եւ այլ եղանակներուն մէջ, օր մը հոս, օր մը հոն, շրջելով մէկ քաղաքէն միւսը, եւ ամէն տեղ խանդավառ ծափահարութեանց արժանանալով։ Թիֆլիսէն, ինչպէս նաեւ Կովկասի եւ բովանդակ Ռուսիոյ գլխաւոր հայաշատ քաղաքներէն հասած տեղեկութիւններ պարբերաբար արձագանք կըլլային այդ յաջողութեանց, որոնց շարքը երբեք չէր աւարտեր. Նոյն իսկ մէկը միւսին նախատօնակը կըլլար շատ հեղ։

Յայտնի չէ սակայն թէ Կարա Մուրզա այդ ծափահարութեանց համեմատ ալ կը վարձատրուէր իր շրջած տեղերը։ Չեմ կարծեր, որովհետեւ քիչ չէ որ դժուարութեանց կը հանդիպէր նուագահանդէս մը կազմակերպելու համար։ Ամէն պարագայի մէջ, խնդիրը հոն է որ կապրէր,—պօհէմի կեանք մը թէեւ, բայց վերջապէս քիչ շատ ապահով։ Ռուսահայերը արդէն թատրոնի, երաժշտութեան մասին մեզ շատ ետ ձգած են, եւ որչափ ալ քիչ ըլլայ իրենց կողմէ արուեստագէտներու տրուած վարձատրութիւնը, կրկին բան մը կրնայ նկատուիլ՝ բաղդատմամբ մեր կողմէ տրուածին։

Այսպէս, Կարա Մուրզայի համար կարելի է ըսել թէ կապրէր իր արուեստին շնորհիւ, հոգ չէ թէ իր արժանիքին հետ համեմատուելու վիճակին մէջ չըլլար ստացած վարձատրութիւնը։ Որովհետեւ անհերքելի եւ քննադատութեան կողմէ բազմիցս նուիրագործված տաղանդ մը ունէր այդ արուեստագէտը, որ ահագին ոգեւորութիւն մը առաջ կը բերէր բոլոր այն տեղերը՝ ուր դիպուածը զինքը բեմ կը հանէր երգելու։ Եւ արդէն, ռուսահայերը առանց իրական արժանիք մը, կարողութիւն մը տեսնելու, ձեռք չեն զարներ մերիններուն պէս՝ որոնք թատրոնին դռնէն ներս կը մտնեն ծափահարելու համար միայն, եւ ընդհանրապէս ահագին գոռում գոչում կը հանեն, ոտքով գետին կը դղրդեցնեն, ձեռքերուն մորթը ճաթեցնելու աստիճան ծափ կը զարնեն... առանց բան մը հասկցած ըլլալու։ Ռուսահայերուն համար ատանկ չէ սակայն։ Պոլսահայ դերասաններէն շատեր, հոս, մերիններէն խանդավառ ծափահարութեանց արժանանալէ վերջը, չեն կրցած գոհացնել Կովկասի հայերը, եւ սուլումով ետ դարձած են։ Ուրիշներ՝ եթէ յաջողած են իրենց արժանիքովն է անշուշտ, եւ ոչ թէ ուրիշ բանով..,

Ռուսահայերը Կարա-Մուրզան ողբալու ուրիշ պատճառ մըն ալ ունին։ Հանգուցեալ արուեստագէտը շատ պտղալից գործունէութիւն մը ունեցած է, եւ շարունակ աշխատած է երաժշտութեան սէրը տարածելու իր ազգակիցներուն մէջ։ Իր դրդումով, իր պնդումներով, բազմաթիւ քաղաքներու մէջ կազմակերպուած են երաժշտասէրներու ամաթէօր խումբեր, որոնցմէ ոմանք իրենց տաղանդը բերած են երաժշտութեան տարածման գործին, եւ ուրիշներ իրենց նպաստը։ Ինչ որ չէր կրնար դրամով ընել, կրցած է յաջողեցնել այն համակրութեան շնորհիւ, զոր կը վայելէր քիչ մը ամէն տեղ։ Երաժըշտութեան առաքեալի պէս բան մը եղած է, եւ իր յաջորդական թուռնէները մէյ մէկ առիթ դարձած են իրեն՝ նոր սիրողներ ստեղծելու գեղարուեստի գրաւիչ ճիւղին շուրջը։ Նուագահանդէսները զորս սարքած է հոս ու հոն, գլխաւորաբար այդ ամաթէօռներուն, այդ սիրողներուն աջակցութեամբ ու մասնակցութեամբ կազմակերպված են, ինչ որ ինքնին բաւական մեծ աջողութիւն մը կըրնայ նկատուիլ իրեն համար։

Միւս կողմէ, գրչովն ալ շատ նպաստած է այդ գործին, թատերական քրոնիկներու, մասնագիտական յօդուածներու եւ քննադատութեանց ամբողջ շարքերու մէջ շարունակ քարոզելով սէր դէպի իր մասնագիտութիւնը, սէր դէպի երաժշտութիւնը, որուն նուիրված էր ինք, եւ կուզէր որ ուրիշներ ալ նուիրուին, խանդավառ իրեն չափ,—չըսեմ մոլեռանդ։ Արուեստակցի նախանձ բռնած բանը չէ ունեցած բնաւ, եւ երգիչի մը յաջողութիւնը յիշատակած է տեսակ մը անխարդախ եւ անհաշիւ հրճուանքով, զոր թերեւս չը պիտի զգար իր որ եւ է մէկ յաջողութիւնը արձանագրուած տեսնելով։ Սա է որ զինքը ընդհանուրին սիրելի դարձուցած է, եւ ռուսահայոց պէս համայնքի մը մէջ,—ուր կուսակցական ոգին նոյն իսկ գեղարուեստի խնդիրներուն չի խնայեր,—առիթը տուած է իրեն ըլլալու մէկը այն բաղդաւոր էակներէն, որուն անունը ամէն մարդ սիրով կարտասանէ, որուն շուրջը ոչ ոք բամբասանքի շղթայ մը կը հիւսէ։

Դժբաղդաբար, վերջին տողերը բոլորովին ճիշդ չեն։ Հանգուցեալ Կարա-Մուրզան ունեցել է եւ բազմաթիւ հակառակորդներ, որոնք աշխատել են անուանարկել նրան նոյն իսկ ամենաանխիղճ, ամենազզուելի միջոցներով։ Կարա-Մուրզայի բնաւորութեան մէջ ամենից հիանալի գիծն այն էր, որ նա երբէք չէր յուսահատվում իր դէմ յարուցած հալածանքներից, ուշադրութիւն չէր դարձնում այն ստոր միջոցների վրա, որոնցով աշխատում էին գցել նրա պատիւը հասարակութեան աչքում, փախցնել նրան ասպարէզից. Նա շարունակում էր իր գործը անընդհատ եռանդով եւ չը կար թշնամութիւն, որ կարողանար նրա առաջ խոչընդոտ դառնալ։ Ո՛չ, Կարա-Մուրզան բացառութիւն չէր կազմում հայ գործիչների մէջ. վարդեր չէին փռված նրա ճանապարհի վրա, այլ, ինչպէս եղել է մեզանում ընդհանրապէս ամէն ժամանակ եւ ամէն դէպքում, օձեր էին ֆշշում չորս կողմում։ Այդ է, որ այնքան մեծ պատիւ է բերում նրա անուան...

ՅԱՐԳԱՆՔ ԴԷՊԻ ԾԱՌԱՏՈՒՆԿԸ

Բանանց գիւղ, ապրիլի 23-ին

Անցեալ մարտի կիսին Գանձակի պետական դպրոցների վարչութիւնը կատարեց մի շատ համակրելի հանրօգուտ գործ—կազմակերպեց ծառատնկման հանդէս, որ բոլորովին նոր բան էր Գանձակում, հետեւաբար եւ օտարոտի։ Քաղաքային ու արհեստաւորաց դպրոցների աշակերտները իրանց ուսուցիչների, տեսուչների ու դիրեկտոր պ. Լեվիտսկու ուղեկցութեամբ, երաժշտական ու երգեցիկ խմբերով, գնացին քաղաքային կենտրոնական հրապարակը, որտեղ տնկեցին մի քանի հարիւր ծառեր։ Հետեւեալ օրը նոյն հանդէսը նոյն շքով կատարեց գիմնազիան, ու այդպիսով Եւրոպայում վաղուց մեծ ժողովրդականութիւն վայելող ծառատնկման հանդէսը մեզ մօտ եւս անցաւ դպրոցական օգտաւէտ զուարճութիւնների շարքը։ Հաւանական է, որ նա ամէն տարի կը կրկնվի եւ գնալով աւելի ու աւելի մեծ ծաւալ կը ստանայ։

Շատ ցանկալի է, որ այդ սովորութիւնը տարածվի մեր գիւղերում էլ, գոնէ այն տեղերում,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՐՍՏԱՀԱՐՎՈՂ ԳԻՒՂԱՑԻՆԵՐ

(Նամակ Ախալցխայից)

Մեր քաղաքի առեւտուրը գլխաւորապէս մեր շրջակայ գիւղացիների հետ է, եւ մեր քաղաքի միակ եկամուտը գիւղական արդիւնաբերութիւնն է։ Ամբողջ գիւղական արդիւնաբերութիւնը գիւղացիք բերում են քաղաք, ծախում եւ ստացած փողով զանազան տնային ապրանքներ առնում։ Բայց չը նայելով, որ մեր քաղաքի առեւտրին կենդանութիւն տուողը միակ գիւղական տարրն է, մեր գիւղացիք, իրանց արդիւնաբերած ապրանքը ծախելիս, շատ անգամ անխիղճ զրկանքների են ենթարկվում։ Մեր գիւղական արդիւնաբերութիւնը գլխաւորապէս հետեւեալներն են՝ ծառապտուղ, միրգ, գարի, ցորեն, հաճար, լոբի, իւղ, պանիր, բոյսեղէն եւ բանջարեղէն, ընտանի կենդանիներ, մորթի եւ այլն եւ այլն։ Գիւղական այս արդիւնաբերութիւնը գլխաւորապէս գնում է քաղաքիս «պախալ» ամսաֆը (մրգավաճառները եւ մանրավաճառները), եւ մեր այս նկատողութիւնը գլխաւորապէս վերաբերում է հէնց այդ «պախալ» ամսաֆի (մի որոշ մասի) գործած անգթութիւններին։

«Պախալ ամսաֆը» մեզանում երկու տեսակի է բաժանվում. մի մասը խանութատէրեր են, որոնք առեւտուր են անում իրանց խանութների մէջ, իսկ միւս մասը, որ բաւական մեծ թիւ է կազմում, թափառաշրջիկներ են եւ սեփական խանութ չունենալով, ձեռքի վրա են առեւտուր անում. գիւղացուց առնում են ապրանքը եւ ծախում՝ կամ խանութպանին կամ անձամբ շրջեցնելով փողոցները։ Այս վերջին տեսակ պախալները մեզանում ժառանգել են «եօզ» անունը (ինչպէս Թիֆլիսում «կինտօ» բառը)։ Ահա այս «եօզերն» են, որոնք այսօր գիւղացու համար մի մի դահիճներ եւ կեղեքողներ են հանդիսանում։ Ահա օրինակներ։

Գիւղացին կամ գրաստով կամ սայլով ապրանք է բերում քաղաք ծախելու։ Հէնց ճանապարհի վրա, քաղաքին մօտ, սպասող մի քանի եօզեր կամ նոյն իսկ խանութպաններ բաւական բարձր գին տալով այդ ապրանքին՝ գնում են. այսպէս պուդը 1 րուբլի արժեցող ապրանքին ուրախութեամբ տալիս են 1 ր. 20 կոպէկ։ Գիւղացին մեծ բաւականութեամբ, միամտաբար իր ապրանքը իջեցնում է գնողների ցոյց տուած խանութի առաջ, որ ապրանքը կշռեն։ Կանչում են քաղաքային «ղանթարճուն», որ կշռէ. (քաղաքային վարչութիւնից կապալով առանձին կշռողներ են, որոնք «ղանթար» կոչված կշեռքով գիւղերից քաղաք ներմուծած ապրանքը կշռում են եւ դրա համար պուդին 1 կոպէկ վարձ առնում)։ «Ղանթարճին», առաջուց պայմանաւորված լինելով գնողների հետ, կշռում է եւ 10 պուդանոց ապրանքը բերում 8—9 պուդ, կամ աւելի պակաս՝ նայած ապրանքի տեսակին։ Գիւղացին, լսելով քաշը, զարմանում է եւ երկմտում, որովհետեւ ինքը տանը կշռել է աւելի, իսկ այժմ պակասում է մօտ երկու պուդ։ Հարցնում է դրա պատճառը եւ տրտունջ յայտնում, որ իր ապրանքը աւելի պէտք է կշռէ։ Բայց ամէն կողմից յորդորում, նոյն իսկ բարկանում եւ հայհոյում են, ասելով, որ այս կշեռքը քաղաքային եւ «թագաւորական» կշեռք է, անկարելի է, որ պակաս կշռէ կամ սխալ լինի, անպատճառ ինքը սխալված կը լինի տանը... Միւս կողմից էլ ինքն «ղանթարճին» (կշռողը) խրոխտալով բարկանում է եւ անպատւում խեղճ գիւղացուն, որ իր կշռածին չէ հաւատում, եւ որ ինչու պէտք է պակաս կշռէ, քանի որ ինքը պաշտօնատար անձն լինելով ոչ մի շահ չունի... (!?)։ Այսպէս հազար ու մի «շոլոլոպներով», յորդորներով ու սպառնալիքով միամիտ գիւղացուն համոզում են, որ ինքը սխալվել է, որ քաղաքային կշեռքը անկարող է սխալ լինել, սխալը գիւղի կշեռքն է, որով ինքը կշռել է եւ այլն եւ այլն։ Ճարահատեալ գիւղացին համաձայնվում է, մի երկու պուդ ապրանքից զրկվելով, որովհետեւ եթէ մի քիչ էլ դիմադրէ եւ իր արդար բողոքը շարունակէ՝ թէ առնողից եւ թէ մանաւանդ կշռողից պիտի անարգանքի, հայհոյանքի, նոյն իսկ ծեծի ենթարկվի, ուստի ուրիշ միջոց չիմանալով, բարւոք է համարում լռել եւ ապրանքը դատարկել, հաշիւը ստանալ ու հեռանալ։

Բայց դատարկելու ժամանակ էլ սկսվում է մի ուրիշ տեսակ կեղեքում։ Գնողները զանազան պատրուակներ մէջ բերելով՝ ապրանքը վատացնում են եւ ստորացնում, առարկելով որ իրանց տեսած ապրանքի նմուշը կամ վրայինը լաւն էր, իսկ ինքը ապրանքը վատ դուրս եկաւ, կամ վրայինը լաւ է լցրած, իսկ միջինը ցածր եւ վատ, կամ մանր է, կեղտոտ է, փչացած է, անպէտք է, եւ այլ հազար ու մի պատճառաբանութիւններ, ուստի սակարկած գնովը չեն կարող վերցնել եւ պահանջում են, որ կամ գինը զեղջէ, կամ ապրանքը ջոկեն եւ միայն լաւ տեսակը վերցնեն։ Գիւղացին մնում է շուարած ու կապված. իր լսածներին ու տեսածներին չէ հաւատում։ Արդէն մի անգամ այդ ապրանքից քաշի մէջ բաւականին վնաս ունեցաւ, այժմ էլ ուրիշ օյին են գլխին ուզում խաղալ։ Սկզբում գնողներին աղաչում է, որ խնայեն իրան, որ իր ապրանքը մի տեսակ է, խառն չէ եւ զուր են նրանք պախարակում. բայց չէ լինում, նրանք աւելի ու աւելի իրանց ասածներն են պնդում եւ այդ բանը հաստատելու համար իրանց կողմնակիցներից մարդիկ են հրաւիրում, որոնք հաստատում են, որ, իրաւ, իրանց ասածը ուղիղ է, որ ապրանքը միատեսակ չէ, ցածր է դուրս եկել եւ այլն եւ այլն։ Էլի սկսվում են վիճաբանուուր կան դպրոցներ։ Ժողովրդական դպրոցների վարչութիւնը, կատարելով քաղաքում այդ հանդէսը, մի տեսակ փորձնական քայլ արեց, որ միանգամայն աջողվեց ու ընդհանուր համակրութիւն գտաւ։ Այժմս նա մտադիր է միւս տարվայ գարնան սկզբներում առաջադրել բոլոր գիւղական դպրոցներին, որ նրանք էլ կազմակերպեն այսպիսի հանդէսներ, որոնց կանոնաւոր անընդհատ կատարումը կանցնի այդպիսով գիւղական դպրոցների առաջնակարգ պարտաւորութիւնների շարքը։

Մեր գաւառի մի գիւղում, որ իր քաղաքակիրթ կացութեամբ ու կուլտուրական զարգացմամբ մի քանի դարով առաջ է միւս բոլոր գիւղերից, վաղուց գոյութիւն ունի այդ սովորութիւնը եւ այն էլ ոչ թէ իշխանութեան դրդմամբ, ներշնչմամբ ու ստիպմամբ, այլ իրանց գիւղացիների նախաձեռնութեամբ։ Նրանք իւրաքանչիւր տարի մեծ հանդիսաւորութեամբ տնկում են բազմաթիւ ծառեր իրանց գիւղի շրջակայքում, խնամքով պահպանում են նրանց ու այդպիսով բուսցնում սեփական անտառ, որից նրանք մի ժամանակ նոյնպիսի խելացիութեամբ կօգտվեն, ինչպիսի խելացիութեամբ նրանք աճեցնում ու զարգացնում են այժմս։ Այդ զարմանալի գիւղացիները մեր գաւառի կուլտուրական օջաղ, Գանձակից եօթ վերստ դէպի հարաւ գտնվող, գերմանական գաղութ Ելենենդորֆի բնակիչներն են, որոնցից տարաբախտաբար հայ ու թուրք գիւղացիները կրիայի դանդաղկոտութեամբ են որ եւ է լաւ բան ընդօրինակում։ Ելենենդորֆում լաւ բաներ խիստ շատ կան։ Դարեր են հարկաւոր, որ նրանք ամբողջովին ներմուծվեն հայ ու թուրք գիւղերը ու հասցնեն նրանց եւս այն երջանիկ վիճակին, որի մէջ այժմս գտնվում է Ելենենդորֆը։ Քաղաքակիրթ ելենենդորֆցին երկարամեայ յամառ ջանքերով բուսցնում է արհեստական անտառ ոչ միայն արդի, այլ եւ իր ապագայ սերունդների բարեկեցութեան համար, իսկ անքաղաքակիրթ, գռեհիկ հայն ու թուրքը անխնայ ոչնչացնում են բնութեան բուսցրած անտառները ու երբ գիւղի չորս կողմում այլ եւս կանաչ թուփ չէ երեւում, սկսում են անիծել իրանց սեւ օրը, իրանց չարքաշ կեանքը, որը տարէց տարի դժուարանում ու դառնանում է նրանց համար։

Անտառների բարբարոսաբար ոչնչացումը, չը նայած պետական կալուածների վարչութեան խիստ հսկողութեան, մի կորստաբեր չարիք է, որը միշտ գոյութիւն է ունեցել, ունի եւ դեռ եւս երկար կը շարունակվի, իր աղէտալի հետեւանքներով կը ծանրանայ ժողովրդի շնքին, քանի նա կը մնայ այժմեան հասկացողութիւնների մէջ ու չի ըմբռնի այն պարզ ճշմարտութիւնը, որ անտառների ոչնչացմամբ նա ինքն իր ձեռքերով քանդում է իր տունն իր գլխին ու նպաստում այդպիսով իր միշտ առաջադիմող չքաւորութեան։ Գիւղական ժողովրդի բարեկեցութեան համար անտառը հողից ոչ պակաս կարեւոր է ու անհրաժշտ։ Ոչնչացնելով անտառները, անխտրաբար, մի տեսակ վայրենի թշնամութեամբ վարվելով նրանց հետ, մեր գիւղացիները իրանց մեծ վնաս են հասցնում ոչ միայն ապագայում, ապագայ սերունդների կացութիւնը դժուարացնելով, այլ եւ ներկայում, հատուցանելով գանձարանին դրամական տուգանքներ ոչնչացրած անտառների համար։ Տարվայ ընթացքում հարիւրաւոր արձանագրութիւններ են մտնում գաւառական դատարանը անտառների ոչնչացման մասին, առնվում են, համաձայն օրէնքի, կրկնակի, երրակի տուգանքներ, բայց չարիքը արմատախիլ չէ լինում։ Բոլոր արձանագրութիւնները կազմըված են լինում հայ ու թուրք գիւղացիների վրա։ Շատ ու շատ հազուագիւտ բան է, եթէ երեք-չորս տարվայ ընթացքում մի-երկու արձանագրութիւն մտնէ դատարան գերմանացու մասին։ Ապօրինութեան այդ թշնամին առանց օրինաւոր թոյլտւութեան չի գնայ անտառ փայտ կտրելու, գնացած դէպքում կը կտրէ միայն այն ծառերը, որոնք դրոշմված են վարչութեան ձեռքով ու որոնց այդպիսով կարելի է կտրել, լաւ իմանալով, որ այդպիսով իրան պէտքական փայտը, գերանը անհամեմատ էժան է նստում իրան, քան յափշտակման դէպքում։ Իսկ հայն ու թուրքը, լաւ իմանալով, որ կը տուժեն անտառի վճարը երրակի, էլի գնում են անտառը գաղտագողի, յոյս ունենալով մի կերպ պրծնել անտառապահի ձեռքից, «ռուխ» չընկնել ու այդպիսով, անկանօն, անխնայ կոտրելով ու փչացնելով ծառերը, ձրաբար օգտվել նրանցից։ «Ռուխ» չընկնելը սակաւ է պատահում, իսկ տուժելը յաճախ, բայց գռեհիկ մարդը չէ ուղղվում, չէ ընտելանում նրա համար անտառ պահող վարչութեան օրինաւոր պահանջներին։

Երբ գիւղացու ուշադրութիւնը դարձնում էք նրա այդ անմտութեան վրա եւ բացատրում անտառների պահպանութեան ու աճեցման անհրաժեշտութիւնը թէ ներկայ եւ թէ ապագայ սերունդների բարեկեցութեան համար, նա պատասխանում է՝ «Եօլս չեմ գնում, բա ո՞նց անեմ. քօլ ա, Աստված բուսցրել ա ու էլի կը բուսցնի. իմ կոտրելով քթահ չի լինիլ. մեր պապերի օվրին բա ո՞նց են կացել ծմակները, երբ ոչ պահողն ա եղած ըլել, ոչ պրատակոլը, ոչ չորափը։ Էդ պրատակոլներն էլ հօ մեր տները քանդում են, քարուքանդ անում. հէնց քօլն ես մտնում թէ չէ, պրատակոլը ձեռաց սուղն ա գնում ու կաշիդ էնտեղ քերթում. ըլում չի, թէ մի հետ պրատակոլից ազատվես, բանդ թաքուն անցկացնես։ Ասում ես, որ քօլը մեզանից ետի ապրողներին էլ ա պէտքը. հա մեզանից ետը ոչ ապրեն, փուչ ապրեն. ինչ ա, ես պէտք ա դժոխքի չարչարանքը վիզ առնեմ հիմա, որ ինձանից ետը իմ թոռները, ծոռները ու հոռները լաւ, զինջ, քէֆով ու չախով ապրեն. իմ չարչարվելուց ետը թող նրանք մինին տասը չարչարվեն, թող չլիզ կոտորվեն, ինձ ինչ. խելառ եմ, ինչ ա, որ չարչարվեմ նրանց զինջ ապրեցնելու համար. ով չուշտ, նա կուշտ. թէ գլխումդ խելք կայ, ճոթիր քեզ համար ինչքան կարող ես Աստուծու սուփրից. ետի եկողը թող ինքն իր դարդը քաշի»։

1897—98 թ. ձմեռվայ ընթացքում մեր գաւառում տաւարի պաշարի սով էր. գիւղացիները սաստիկ նեղութիւն էին զգում։ Պետական կալուածների վարչութիւնը, մտնելով նրանց անելանելի դրութիւնը, թոյլ տուեց ժամանակաւորապէս օգտվել անտառներով տաւարի համար—կտրել պեխի (грабъ) կոչվող ծառերի ճղների ամենաբարակ ծայրի մասերը նրանց վրայի կոկոններով կերակրել անասուններին։ Գիւղացիները չիմացան խելացիութեամբ օգտվել այդ մարդասէր կարգադրութիւնից ու մեծ աւերմունք պատճառեցին անտառներին։ Զովդառ գիւղի բնակիչները արմատից ոչնչացրին մի քանի դեսեատին կուսական անտառներ, որի համար սաստիկ տուժեցին. նրանց պատճառած աւերմունքի մասին կազմվեց արձանագրութիւն. դատարանը վճռեց պահանջել նրանցից յօգուտ գանձարանի մօտ 2000 ր., մի գումար, որը Զովդառի պէս խղճուկ գիւղի համար միլիարդի նշանակութիւն ունի։ Մինչեւ օրս զովդառեցիները մաս-մաս իրանց սովորական հարկերի հետ վճարում են այդ գումարը եւ դեռ չեն վերջացրել։ Երբ դատարանում նրանց հարցրին, թէ ինչու այդպէս վայրենաբար աւերեցիք ձեր անտառները, նրանք պատասխանեցին՝ «Թագաւորն ապրած կենայ, ասեցին հրաման ա արել, որ ռահաթը ծմակները կտորի ու եօլա գնայ. էդ խաբարը մեր չէնը հասաւ թէ չէ, ամաքս մի կացին առանք ու քօլերը դառանք, էլ կաղնած ծառ չը թողեցինք, տեղովը հընցրինք»։—«Ի՞նչու չէիք բարձրանում վեր ու ծառերի ճղների ծայրերը կտրում»,—հարցրին նրանց։—«Էն ցրտերով ո՞վ վեր կը բարձրանար. էն ա ասեցինք, որ հրամանը ողորմած թագաւորէն ա, տակէն կտորենք. մեզ պատիժ չեն տալ»։

Զովդառեցիները իրանց անուղղելի գռեհկութեան շնորհով պատժվեցին խիստ, պարտաւորվելով 2000 ր. չափ տուգանք հատուցանել գանձարանին, ու ծոծրակները քորելով եւ իրանց սեւ օրն անիծելով՝ հեռացան դատարանից։

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԳԱՒԱՌԻՑ

Կիւլբէկլիք գիւղ, ապրիլ 15-ին

Ամեն անգամ, երբ դպրոց, ուսուցիչ, գիրք միտքս են գալիս, մի օտարոտի սարսուռ է անցնում մարմնովս եւ իսկոյն երեւակայութեանս մէջ պատկերանում է մեր գիւղացի մանուկների ներկայ դրութիւնը, որ գնալով աւելի եւ աւելի է վատթարանում եւ անհետաձգելի օգնութեան մի առարկայ դառնում։ Մեր գիւղերում երեխաները մեծանում են բոլորովին առանց պատշաճաւոր ուշադրութեան եւ համարեա Աստուծու կամքին է թողնված դրանց ճակատագիրը, որը յաճախ եւ աղետալի է լինում դեռ ծաղիկ հասակում։

Մի քանի օր սրանից առաջ Ն. գիւղում մայրը, քնած թողնելով իր փոքրիկ երեխային եւ դուռը դրսից փակելով՝ գնում է այգին իր գործին։ Չէ որ դրանց խնամքին են թողնում տան կառավարութիւնը Ռուսաստանի զանազան վայրերում վխտացող թափառաշրջիկ պանդուխտները, այդ կանանց ամուսինները։ Երբ դժբախտ մայրը վերադառնում է տուն, մեռած է գտնում իր փոքրիկին, որը զարթնելիս այնքան լաց է եղած լինում, որ սրտի պայթիւն է ստանում։

Այն միջնոլորտը, ուր ծնվում, ապրում եւ մեծանում է գիւղացու մանուկը՝ թէ հակաառողջական է եւ թէ հակադպրոցական ու միանգամայն զուրկ ցանկալի ընտանեկան կրթութիւնից։ Այդ շրջանը յաճախ այնպիսի զզուելի սովորութիւններ է ներշնչում երեխայի սրտում, որ դպրոցը, ուսուցիչը եւ գիրքը իրանց խելացի ու համբերատար գործունէութեամբ շատ անգամ անզօր են լինում ջնջելու, արմատախիլ անելու դրանց վատ հակումները։

Բացվում է երեխայի լեզուն թէ չէ, դուք այնպիսի անտանելի, այնպիսի անբարոյական հայհոյանքներ էք լսում դրանց բերանից, որ ապշած, կամ ականջներդ բռնած փախուստ էք տալիս, հեռանում։ Դեռ չորս-հինգ տարեկան հասակում երեխան գիտէ գողութիւն անել եւ յաճախ այնպիսի ճարպիկութեամբ է կատարում այդ, որ դուք տեղն ու տեղ մնում էք սառած։ Իսկ ստախօսութիւն ու խաբեբայութիւն սովորական բաներ են։

Բայց ինչ են դրանց ծնողները։ Երբ ծնողները հաշիւ ու համար չեն դնում իրանց գործունէութեան, իրանց առօրեայ նիստ ու կացի մէջ, էլ ինչ ուշադրութիւն պիտի դարձնեն իրանց մանուկների վրա, երբ համոզված են, որ «Աստուած տուել է, Աստուածն էլ կը պահէ»։ Յաճախ այսպիսի անտարբեր ու անզգոյշ ծնողներ իրանք իրանց ձեռքով փորում են իրանց երեխաների գերեզմանը կամ նրանց ամբախտութեան պատճառ դառնում։ Այսօր-վաղ գցելով, ժամանակին պատուաստել չեն տալիս երեխայի ծաղիկը, եւ երբ յանկարծ ծաղիկը վրա է հասնում ու տարածվում գիւղում, նրանք նոր են ուշքի գալիս, խունկ ու մոմ առնում եւ այս ու այն սրբի փէշերը քաշ գալիս, կամ գրբացի ճանկն ընկնում թէ՝ արդեօք իր մին ու ճարը կազատվի թէ ո՞չ։ Բայց ինչ.—մին ու ճարը շատ անգամ կամ մեռնում է կամ զրկվում աչքերից։ Կան եւ այնպիսիններ, որոնք երեխայի քէֆին են թողնում, թէ երբ նա կը զգվի եւ կը թողնէ ծիծը. եւ այսպէս, լինում են դէպքեր, որ երեխան հինգ-վեց տարի շարունակ ծիծ է ծծում, իսկ ծնողները համոզված են թէ՝ որքան շատ ծծէ, այնքան խելօք եւ երկարակեաց կը լինի։ Սակայն որքան գիտենք, դա շատ վատ է երեխաների համար։

Լ. Խանասանամեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, ապրիլի 22-ին

Ապրիլի 9-ին տեղի ունեցաւ մի ընտանեկան երեկոյթ ի յիշատակ հանգուցեալ Կարա-Մուրզայի։ Երեկոյթի սկզբում ծանօթացրին ունկնդիրներին ննջեցեալի գործունէութեան հետ։ Ոգեւորված եւ հետաքրքիր կազմած ճառից յետոյ ներկայ եղողները ոտքի կանգնելով

թիւններ, աղաղակներ, հայհոյանք, սպառնալիք։ Եթէ գիւղացին թոյլ է եւ միամիտ, ճարահատեալ համաձայնվում է եւ 1 ր. 20 կոպէկով տուած ապրանքը իջեցնում են 90 կ.—1 րուբլի եւ այսպէս, մի երկու րուբլի վնասվելով, հաշիւը ստանում ու գլուխը ազատում, անիծելով իր չար բաղդը։ Իսկ եթէ գիւղացին քիչ ճարպիկն է եւ բանի էութիւնը հասկացել է, ամենեւին չէ համաձայնվում եւ դիմադրում է, ուզում է ապրանքը տանել, ուրիշին ծախել, բայց գնողները չեն թողնում, ուստի դիմում է ոստիկանութեան։ Այս կողմն է ընկնում, այն կողմ, հազիւ հազ գտնում է մի քաղաքապահ ոստիկան եւ պատմում բոլորը։ Բայց քաղաքապահը մերժում է նրան առարկելով, որ դա իր գործը չէ, դա շուկայի վերահսկողի գործն է։ Կամ թէ չէ քաղաքապահը միջամտում է, բայց գնողների հետ «աչք ու ունք» անելուց յետոյ, ինքը եւս հաստատում է նրանց պատճառաբանութիւնը եւ հէնց գիւղացուն մեղադրում, որ այդպիսի խարդախութիւններ է անում եւ նոյն իսկ սպառնում... Գիւղացին մնում է յուսահատ ու սառած. ում դիմէ այլ եւս, որտեղ գտնէ շուկայի վերահսկիչին, եւ մտածում է, թէ մի գուցէ իր չար բաղդից գործը վատ ընթացք ստանայ, մի գուցէ վերահսկիչն էլ եւ ուրիշներն էլ քաղաքապահի պէս փոխանակ գնողներին, իրան մեղադրեն, ուստի ակամայ ընկճվում եւ մի կերպ վերջացնում է։ Այսպիսի անզգութիւններ մեզանում միշտ պատահում են, մանաւանդ ամառվայ եւ աշնան ամիսներում, երբ գիւղերից ամեն օր առաջին քանակութեամբ միրգ եւ այլ բուսական արդիւնքներ են ներմուծվում քաղաքը։

Բացի այս տեսակ կեղեքումներից, մեզանում տեղի են ունենում ի միջի այլոց եւ ուրիշ տեսակ խաբեբայութիւններ խեղճ ու միամիտ գիւղացուն հարստահարելու համար։—Բացի մեր շրջակայ գիւղերի արդիւնքներից, մեր քաղաքը բերում են թէ Աճարայի, թէ Քութայիսի եւ թէ Ախալքալաքի շրջակայ գիւղերից միրգ, իւղ, պանիր, հացահատիկ եւ ուրիշ ապրանքներ։ Քաղաք ներմուծված ապրանքները, ըստ սովորութեան, իջեցնում են «դափան» կոչված վաճառատեղում, որտեղ հաւաքվում է ամբողջ «պախալ» ամբոխը եւ շուկայի վերահսկիչի միջոցով գին է նշանակվում եւ ապրանքը բաժանվում միմեանց մէջ։ Եւ որովհետեւ այդ միջոցով ապրանքատէր գիւղացուն անկարելի է կամ շատ դժուար է թէ քաշի եւ թէ հաշւի մէջ կեղեքել, ուստի մեր «եօզերը» այս ժամանակները միշտ սպասում են ճանապարհների վրա, եւ երբ տեսնում են, որ անծանօթ գիւղացիներ ապրանք են բերում քաղաք, հէնց այստեղից առաջնորդելով՝ խաբում, տանում, կամ ուղղակի գին տալով, իջեցնում են ապրանքը իրանց նշանակած խանութը կամ խուլ անկիւնում։ Եւ միամիտ գիւղացիները համոզվում են, որ այդտեղ է ապրանք իջեցնելու տեղը, հաւատում եւ իջեցնում են ապրանքը։ Ահա այդտեղ բացվում է հետաքրքիր տեսարան։ Ամող «եօզերից» մինը, աւելի դիրքովը, ժամացոյցի շղթան ցոյց տալով՝ իրան ձեւացնում է շուկայի վերահսկիչ եւ միամիտ գիւղացին հաւատում է։ Սրա միջոցով գինը վերջացնում են. թէ գնողները եւ թէ միամիտ գիւղացին, ի հարկէ, համաձայնվում են նրա որոշման։ Երբեմն ի հարկէ ձեւական սակարկութիւններ են լինում գնողների եւ այդ ինքնակոչ «բազարնիկի» մէջ եւ յետոյ կշռում են ըստ իրանց ցանկութեան։ Վերջը հաշիւը տեսնում է նա, որտեղ կեղծ վերահսկիչը իբր պաշտպանում է գիւղացու շահերը գնողներից եւ ստանալով փողերը յանձնում գիւղացուն։ Գիւղացին սկըզբում առանց երկմտելու հաւատում է նրան, բայց վերջը, երբ ապրանքի քաշը եւ բռնած քիչ գումարը տեսնում է, մի քիչ տատանվում է, թէ մի գուցէ մի բան լինի այստեղ, մի գաղտնիք կայ, բայց էլի չէ վստահանում, միայն մի քիչ տրտունջ է յայտնում, որ շատ քիչ եկաւ քաշը, իր բերած ապրանքը ինքը կշռել է շատ գիւղերում։ Բայց ինքնակոչ «բազարնիկը» յամառօրէն սաստում է նրան եւ բարկացած համոզում, որ ինքը այնտեղ ներկայ է եւ այդպիսի բաներ չէ կարող տեղի ունենալ... Վերջապէս գիւղացու արդարացի բողոքը խեղդում են եւ համոզելով ճանապարհ գցում։ Եւ այսպէս 10—20 րուբլու ապրանքը իջեցնում են մինչեւ 5—15 րուբլի։

Այսպիսի ցաւալի եւ սիրտ կտրատող տեսարանների մենք միշտ ականատես ենք լինում եւ համարեա անհոգ սրտով ենք վերաբերվում եւ մինչեւ այսօր դրանց դէմ միջոցներ ձեռք չեն առնված...։ Չունենք կարգին հսկողներ, որ գոնէ այսպիսի ժամանակներում հոգ տանեն, որ գիւղացու արիւն քրտինքով աշխատած, առանց այն էլ քիչ արդիւնքը զոհ չը գնայ մի քանի անխիղճների ձեռքին։ Թէեւ կան երկու թէ երեք վերահսկիչներ, բայց դժբաղդաբար նրանք միայն անունով եւ ռոճիկ ստանալու համար գոյութիւն ունեն, իսկ գործին շատ անտարբեր են։

Անցեալ օրը ականատես եղայ մի սրտաճմլիկ տեսարանի։ Մի խեղճ գիւղացի բերել էր բաւական արժէքաւոր (5—8 րուբլի) մի մորթի (սամուրի)։ Ընկնելով այդպիսի մի խաբեբայի ձեռքը, նա չէ համաձայնվում նրա առաջարկած գնով տալ. խաբեբան առնում է մորթին գիւղացու ձեռքից եւ դանակով ծակում ու պոչը կտրում փչացնում։ Խեղճ գիւղացու գլխին «սառը ջուր» լցրին, մնացել էր շուարած. այս անսպասելի արկածից սարսափահար եղած սկսվեց արտասվել։ Ի՞նչ անէր, չէր կարող նրա հետ քաղաքումս կռւել եւ վնասը պահանջել։ Մինչեւ գիւղացին գնաց գանգատվելու, եկաւ մեղաւորին բռնելու եւ պատասխանատւութեան ենթարկելու, ծակողը արդէն անհետացել էր, իսկ գիւղացին էլ չէր ճանաչում նրան։ Այսպէս գիւղացին զրկվեց 5—8 րուբլի արժեցող մորթուց։

Խ. Ղազարոսեան

յարգեցին Կարա-Մուրզայի յիշատակը։ Ապա սկսվեց համերգը։ Ամենասիրալիր ընդունելութիւն գտան հանգուցեալի աշակերտները, որոնց երկսեռ խումբը երգեց մի շարք երգեր, որոնք արժանացել էին Կարա-Մուրզայի առանձին սիրուն։ Բացի այն, որ հանգուցեալի յիշատակը յարգվեց պատշաճ ձեւով, երեկոյթի հետեւանքն էր նաեւ այն, որ տեղի ունեցան երեկոյթից յետոյ նուէրներ յօգուտ հանգուցեալի ընտանիքի։ Գումարվեց 300 րուբլի։ Մտադրութիւն կայ կրկնելու այդ փորձը եւ կազմել մօտ ապագայում կլուբի դահլիճում մի համերգ նոյն նպատակով։

Կովկասի բոլոր քաղաքներում կան բազմաթիւ տիկիններ, օրիորդներ եւ պարոններ, որոնք ժամանակին Կարա-Մուրզայի աշակերտներն էին։ Եւ եթէ բոլորն էլ հետեւեն Բագւի օրինակին՝ անշուշտ հետեւանքը մխիթարական կը լինի։

Համակրող

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նորին Մեծութիւն պարսից Շահը շնորհել է Կովկասեան կառավարչապետի օգնական գեներալ Ֆրէզէին ոսկեայ ծխախոտատուփ՝ զարդարված ադամանդներով եւ խոշոր յակինթներով, Բագուի ոստիկանապետ Օխրիմենկուն ադամանդեայ մատանիք եւ նրա օգնական Պոլոնկոյին՝ «Առիւծի եւ Արեւի» շքանշանի 3-րորդ աստիճանը։

Մեզ հաղորդում են, որ հանգուցեալ հնագէտ Երիցեանի գրադարանում եղած բազմաթիւ վրացերէն դոկումենտները, որոնք վրաց թագաւորների արխիվից էին մնացել, ձեռք են բերել երկու վրացի հնասէրներ, խոստանալով վճարել արժողութիւնը հանգուցեալի ընտանիքին։

Երեքշաբթի, ապրիլի 30-ին, Թիֆլիսի դատաստանական պալատի 3-րորդ քաղաքացիական դէպարտամէնտում, քննվեց Տովեանեանների եւ ընկ. առեւտրական տան գործը։ Դատաստանական պալատը որոշեց բեկանել Բագուի նահանգական դատարանի վճիռը եւ հաստատել Բագուի բորսային կոմիտէտի յայտարարութիւնը, որով իրաւունք է խնդրվում ադմինիստրացիա հաստատել Տովեանեանների եւ ընկ. առեւտրական տան գործերի վրայ։

Ապրիլի 27-ին պարսից Շահը ընդունեց Բագուի հայ ազգաբնակութեան ներկայացուցիչներին։ Ընդունելութեան ժամանակ Կ. Խատիսեան եւ Ս. Ցարութիւնեան ողջոյնի ճառեր արտասանեցին։

Ա. Նովիկով, որ ընտրված է Բագուի քաղաքագլուխ, համաձայնվել է ընդունել այդ պաշտօնը եւ ներկայումս գտնվում է Թիֆլիսում։

Մեզ հաղորդում են, որ «Сверхъ-Театръ»-ի կամ արտաթատրոնի ներկայացումները Թիֆլիսում այնպիսի ոգեւորութիւն չեն առաջ բերում, ինչպիսին ցանկանում էին նրա կազմողները։ Երկրորդ ներկայացմանը օթեակների մեծ մասը դատարկ էր եւ հասարակութիւնը շատ չափաւոր կերպով էր հրճվում ու ծափահարում։ Ներկայացնում էին «Дамскій докторъ» եւ «Сверхъестественный сынъ» պիեսները։ Հասարակութիւնը աւելի հաւանեց վերջին պիեսը, իբրեւ աւելի աջողվածը, սակայն այդ պիեսի վերջին գործողութիւնը շատ թոյլ է։ Ըստ երեւոյթին «Сверхъ-Театръ»-ի աջողութիւնը աւելի ռեկլամայի արդիւնք էր, քան իսկական արժանաւորութեան։

Շաբաթ, մայիսի 4-ին, Թիֆլիսի առաջին իգական գիմնազիայի դահլիճում, բժ. Վ. Արծրունի կը կարդայ մի դասախօսութիւն Թիֆլիսի ուսուցչուհիների ընկերութեան անդամուհիների համար։ Դասախօսութեան նիւթն է—«Արհեստական եւ բնական հիպնոտիզմը»։

Կովկասեան տնայնագործական կոմիտէտը Պետերբուրգի համառուսական տնայնագործական ցուցահանդէսի ժամանակ ստացել է արծաթեայ մեծ մեդալ։

Ներքին գործերի մինիստրութեան մէջ այժմ մշակվում են կանոններ, որոնցով մտադրութիւն կայ հիմնել կառավարչական հրդեհային տեսուչների պաշտօններ, որոնք պէտք է հսկեն նահանգներում եւ գաւառներում հակահրդեհային պաշտպանութեան դրութեան վրա եւ միջոցներ ձեռք առնեն հակահրդեհային գործը զարգացնելու եւ ամուր հիմունքների վրա դնելու նպատակով։

Մօտ օրերումս Թիֆլիսի առաջին հաշտարարական բաժանմունքում քննվեց Դանդուրովի 2000 րուբլու պահանջը Կովկասեան Գիւղատընտեսական ընկերութիւնից՝ նուագածուների խումբ պահելու համար կովկասեան յոբելեանական ցուցահանդէսում։ Հաշտարար դատաւորը վճռեց պահանջել Գիւղատնտեսական ընկերութիւնից յօգուտ Դանդուրովի 2000 րուբլու ամբողջ գումարը։

ՍԱԼԵԱՆԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 24-ին, երեկոյեան ժամը 5-ին, Էնզելիից Լենքորանի ցամաքային ճանապարհով քաղաք հասաւ պարսից Վեհափառ Շահը։ Ընդունելութիւնը փառաւոր էր։ Շահին դիմաւորել էին Վլադիկավկազի կոզակների գունդը նուագախմբով, Սալեանի վարչական անձինք, պարսիկ ամբոխը եւ հայերը, ի միջի այլոց «Պիթօեվ» ընկերութեան կողմից կառավարիչ պ. Բէկնաթանեանը չոգենաւով եւ «Богдановскій» վաթագի կառավարու պ. Ց. Մայիլեանը նոյնպէս չոգենաւով, որը զարդարված էր պարսկական գորգերով եւ դրօշակներով։ Օդը դղրդաց ուռաներով։ Շահը կառքից իջաւ չոգենաւ եւ անցաւ Կուր գետը. չոգենաւը կանգ առաւ Շահի համար յատկապէս պատրաստված բնակարանի հանդէպ. մուզիկան նուագեց պարսկական մարշ։ Պարսից Շահը մօտաւորապէս 10 րոպէ կանգ առաւ կամարի տակ եւ ամենքին շնորհակալութիւն յայտնելով՝ շքախմբով մտաւ իր բնակարանը։ Քաղաքը մեծ կենդանութիւն էր ստացել. երեկոյեան տեղի ունեցաւ հրավառութիւն։ Հետեւեալ օրը, ապրիլի 25-ին, ժամը 12-ին «Богдановскій» վաթագի հրապարակում տեղի ունեցաւ ձիարշաւ, որից յետոյ նախաճաշ, որ պատրաստել էր պ. Ց. Մայիլեանց։ Ներկայ էր Վեհափառը իր շքախմբով։ Այդ օրը վաթագի պարսկաստանցի, նմանապէս կովկասցի հայ, պարսիկ եւ ռուս հարիւրաւոր բանուոր-արհեստաւորներին արձակուրդ էր տուած, ի պատիւ Շահի։ Ուռաներին վերջ չը կար։ Նորին Մեծութիւնը նախաճաշելուց յետոյ ժամը 2-ին իր շքախմբով ցամաքային ճանապարհով ուղեւորվեց երկաթուղու Հաջի-Կաբուլ կայարանը ուրախ եւ գոհ ամենքից։ Շահին ուղեկցում էին Կովկասի կառավարչապետի կողմից նշանակված 2 պաշտօնեաներ, Բագուի պ. նահանգապետը եւ բարձրաստիճան անձինք»։

ԿԱՐԱԿՈՒՐՏԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 21-ին, կիրակի օրը, Սարիղամիշում տեղային սիրողները յօգուտ շամախեցիների խաղացին «Արշակ Բ.» պատմական պիէսան եւ «Էլ չարէս ինչ է» վօդեվիլը։ Սարիղամիշում մի վատ սովորութիւն կայ, այն է, որ ժողովուրդը ինքնակամ չէ գալիս տոմսակ վերցնելու, այլ անպատճառ պէտք է սիրողները ման գան խանութները եւ վաճառեն։ Այնպէս որ մինչեւ ներկայացման վերջին օրը տոմսակների համարեա կէս մասը չէր վաճառվել։ Այդ տեսնելով՝ տեղային պ. գաւառապետը ինքն անձամբ ման եկաւ խանութները եւ վաճառեց տոմսակները։ Ներկայացումից յետոյ տեղի ունեցան տեղական պարեր»։

ԽԱՂԽԱՑԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 15-ին էլ կատարեալ ձիւն եկաւ Մեղանում։ Մի քանի օրեր այնքան ցրտեր եղան Մեղանում, որ ջուրը սառել էր եւ մարդիկ վերստին տաք շորեր հագան։ Այս անսպասելի ցրտերը ընդհանրապէս վնասեցին եւ ցրտահար արին մեր բուսականութիւնը, մանաւանդ բացված ծառերի ծաղիկները»։

ՄՕԶԴՕԿԻՑ մեզ գրում են. «Ուրբաթ, ապրիլի 26-ին, հայ դրամատիկական խումբը, մասնակցութեամբ տիկին Սիրանոյշի, խաղաց չորրորդ եւ վերջին անգամ «Զաւակ»։ Ներկայացումը ընդհանրապէս լաւ անցաւ։ Վերջը խաղացին «Ծարահատեալ դերասան» վօդեվիլը, որ անցաւ բաւարար։ Ապրիլի 27-ի առաւօտեան ժամը 10-ին ամբողջ դերասանական խումբը ճանապարհ ընկաւ դէպի Աստրախան մի քանի ներկայացումներ տալու»։

ՇԻՐԱԿԻՑ մեզ գրում են. «Վերջին ժամանակներս Շիրակում մի քանի մարդասպանութիւններ պատահեցին. շնորհիւ նոր գաւառապետ պ. Ջեդգինիձէի, ոճրագործները ձերբակալվեցին»։

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ մեզ գրում են. «Անցեալ ուրբաթ օրը, ապրիլի 26-ին, հանդիսաւոր կերպով կատարվեց ծառատնկութեան տօնը, որը նորութիւն էր Նոր-Բայազէտի համար։ Որոշեալ օրը, վաղ առաւօտեան, երեխաները մօտ 300 հոգի հաւաքվելով, զոյգ-զոյգ շարված, ուսուցիչների առաջնորդութեամբ անցան մեծ հրապարակով դէպի ոստիկանատունը, իսկ այնտեղից, ուղեկցութեամբ խուռն բազմութեան, ուղեւորվեցին արդէն ծառատնկութեան տեղը։ Վարչական հաստատութիւններում ծառայողները, նաեւ պատուաւոր անձինք ներկայ էին՝ յատուկ պաշտօնական հրաւէրներով։ Իւրաքանչիւր դպրոց առջեւից տանում էր իր դրօշակը։ Պակասը լրացնում էին երաժշտական գործիքները, որոնց համաչափ յանգով շարժվում էր աշակերտական սիւնը։ Հասնելով տեղ, թափորը կանգ առաւ, որից յետոյ մաղթանք կատարվեց։ Տունկերը եւ ցանելիք սերմերը օրհնելուց յետոյ, աշակերտներին անմիջապէս բաժանվեցին բահեր եւ բրիչներ։ Մի վայրկեանում գործը եռ եկաւ։ Աւելի փոքրիկ բանուորները ծառեր էին կրում, իսկ հասակաւորները զբաղված էին արդէն տնկելու գործով՝ ղեկավարվելով բուսաբանութեան եւ երկրաչափութեան դասերից ձեռք բերած հմտութիւններով։ Մինչեւ ճաշ անելիքի $^{3}/_{4}$ մասը կատարված էր։ Թեթեւ նախաճաշից յետոյ—բաղկացած հացից, ձուից, կանաչուց եւ մսեղէնից—1—2 ժամ չը քաշեց՝ ինչ ամեն բան աւարտված էր։ Հանդէսի վերջը, երեկոյեան դէմ, կազմակերպվեցին մանկական պարեր եւ խաղեր։ Աշակերտներին բաժանվեց մրգեղէն գաւառապետ Ղորղանեանցի կողմից։ Վերջը բոլորին միատեղ՝ լուսանկար Մանուկեանցը խմբովին պատկերահանեց»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼՍԻ ԼՐԱԳԻՐՆԵՐԻՑ

—Կարինէն 150 ստորագրութեամբ հանրագիր մը ղրկուած է պատրիարքարան, որով կը խնդրուի Սանասարեան խնամակալութենէն, որպէս զի յօգուտ Կարնոյ հայ մանկտւոյն Սանասարեան վարժարանը չը փոխադրուի Խարբերդ, այլ մնայ ի Կարին։ Մի եւ նոյն իմաստով հանրագիր մըն ալ Կարնոյ գաւառ. վարչութեան տրուեր է։ Առնք Սանասարեան վարժարանի ուսուցիչներուն թելադրութեամբ եղած բաներ են, ինչպէս աւելի առաջ ալ գրած ենք։ Անշուշտ յանձնաժողովոյ կողմէ այս առաջարկները նկատողութեան չը պիտի առնուին եւ վարժարանը պիտի փոխադրուի Խարբերդ մանաւանդ այն պատճառաւ որ վերջերս Սանասարեան գումարով Պոլսոյ մէջ գնուած խանն ալ վագֆ եղաւ «Խարբերդի Սորսորի վանքին Սանասարեան վարժարանի» անունով եւ այդ մասին բարձրագոյն հրամանն ալ վաղուց ստացուած է։

—Զմիւռնիոյ մէջ փորձեր եղան հանգանակութեամբ՝ հանգուցեալ Զուհաճեանի գերեզմանին վրա շիրիմ մը կանգնելու համար, բայց այդ փորձերը որ եւ է արդիւնք չը տուին։ Կը լսենք թէ իր աշակերտներէն Ցարութիւն էֆ. Սինանեան եւ Սմբատ էֆ. Քէսէճեան խորհեր են հանգուցելոյն հեղինակած «Հայր մեր»-ը տպագրել եւ ծախելով արդիւնքը յատկացնել նոյն նպատակին, այսինքն փոխանակ ասոր անոր նպաստին դիմելու, ուղղակի հանգուցելոյն աշխատութեան արդիւնքովը կանգնել իր յուշարձանը։

—Հայ-հռոմէական վարդապետներէն Հ. Ս. Սիրունեան որ աւելէ առաջ պատարագի խորհուրդը ֆրանսերէնի թարգմանած էր, այս անգամ ալ ձեռնարկած է Աւետարանի աշխարհաբառ թարգմանութեան, խել մը հնախօսական, պատմական եւ աշխարհագրական ծանօթութիւններով։ Ամբողջ գործը երեք հատոր պիտի ըլլայ եւ Ա. հատորը, որ Մատթէոսի աւետարանը կը պարունակէ, մօտերս լոյս պիտի տեսնէ։

Վանէն կը գրեն. «Անցեալ բարեկենդանին ոգեւորութիւն եւ փայլ մը տուին Արարուց Թաղի վարժարանի ուսուցիչներուն նախաձեռնութեամբ կազմակերպուած թատերական ներկայացումներ, որոնք տեղի ունեցան երեք օր, բարեկենդանի հինգշաբթի, ուրբաթ, շաբաթը յաջորդաբար, նոյն վարժարանի մէջ, ի նպաստ աղքատիկ ուսանողաց, հրամանաւ վսեմափայլ կուսակալին եւ նախագահութեամբ կուսակալութեան փոխանորդ վսեմափայլ Ցովհաննէս Ֆէրիտ պէյի։ Թատերական ներկայացում Վանայ մէջ. քիչ մը շատ չէք գտներ։ Սակայն, չը նայելով որ ներկայացնողները միմիայն թատրոնի ամաթէօռներ էին, նոյն իսկ շատեր թատրոն չը տեսած մարդիկ, ներկայացումները շատ մեծ գոհութիւն պատճառեցին այն ամեն հանդիսատեսներուն, որոնք սիրայօժար փութացեր էին գնել մուտք տոմսեր, տալով իրենց դրամը գաղթնոյի եւ գինետուներու մէջ վայելած հաճոյքներէն գերազանցապէս բարձր եւ բարոյացուցիչ զբօսանքի մը համար։ Ցանկալի էր, որ այս ներկայացումները առաջին եւ վերջին չըլլային։ Բաւական յոգնութիւն կրեցին անշուշտ յիշեալ դպրոցի ուսուցիչներն եւ թաղականները, սակայն իբր 30 ոսկի գումար մը շահած եղաւ իրենց դպրոցը, եւ ժողովուրդը գոհ մնաց իրենցմէ։

Ներկայացուած խաղերն էին երկու կատակերգութիւններ, Պարոնեանի «Պեծապատիւ մուրացկանները» եւ Տիգրան Ամիրջանեանի տեղական կեանքէ առնուած եւ տեղական բարբառով գրուած խաղ մը։ Բնականաբար դերասանները շատ աջող պիտի ըլլային վերջին խաղին մէջ, որ կապ ունէր ամենօրեայ իրենց տեսած կեանքին հետ։ Երեք արարուածով կարճ կատակերգութիւն մըն է այս, որուն մէջ կը պատկերանայ գաւառական շատ մը ընտանիքներու բաժանման տեսարանը, որ յաճախ կուգայ շատ անգամ ընտանիքի անդամներու տարբեր աստիճանի զարգացումէն եւ հակընդդէմ բնաւորութիւններէն։ Խաղին մէջ ի հանդէս կուգան ծոյլ մը, իմաստակ մը, նախապաշարեալ մը, լրջախոհ մը, գինով մը եւ ընտանեմոլ մը, որոնք իրարու հետ կը վիճաբանին եւ կորոշեն բաժնուիլ, հակառակ իրենց պառաւ մօր արտասուքներուն։ Տեղական բարքերէն շատ բան, նաեւ նախապաշարումներ երեւան կուգան այս խաղին մէջ, որ եթէ տպուած ըլլար, բաւական նիւթ պիտի մատակարարէր բանասէրներուն։

(«Սուրհանդակ»)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«С.-Пет. Вѣд.» լրագրին գրում են Բեռլինից. «Արդէն վաղուց պարլամենտական շրջաններում լուրեր էին պտտում նոր օրէնքների մասին, որոնցով պրուսական կառավարութիւնը կամենում է սահմանափակել լեհացիների իրաւունքները։ Այժմ առաջին քայլը այդ ուղղութեամբ արդէն արված է։ Վերջին ժողովին կառավարութիւնն արդէն ներկայացրել է մի զեկուցում նոր գումարներ նշանակելու մասին, որոնցով լեհական հողեր գնվէին Պօզնանում եւ արեւմտեան Պրուսիայում։ Լեհական կլուբի նախագահ իշխան Ֆէրդինանդ Ռաձիվիլլ եւ Կօսցիելսկի վերին ժողովում չափազանց խիստ ճառեր արտասանեցին կառավարութեան լեհական քաղաքականութեան եւ առանձնապէս գաղթականական մասնաժողովի գործունէութեան դէմ։ Լեհական ճառախօսները յայտնեցին, թէ մասնաժողովի գործունէութեան մէջ կան փաստեր, որոնցով պէտք է զբաղվէր պրօկուրորը, եթէ գործը վերաբերվէր մասնաւոր ձեռնարկութեան եւ ոչ կառավարութեան։ Այն միջոցները, որոնց դիմում է կառավարութիւնը լեհական քաղաքակրթութիւնը ջնջելու եւ նրան գերմանականով փոխարինելու համար, մի-մի ամօթալի բռնութիւն եւ յանցանք են, որոնց մասին ոչ ոք չէր կարծի, թէ նրանք տեղի կունենան Գերմանիայում XX-րդ դարում։ Ժողովի նախագահը, «Gazeta Polska» լրագրի ասելով, մի քանի անգամ ընդհատեց ճառախօսներին, մի բան, որ շատ հազուադէպ է պրուսական վերին ժողովում, որտեղ [illegible] ճառախօսութիւններ եւ յարձակումներ կառավարութեան վրայ համարեա երբեք տեղի չեն ունենում։ Կառավարութեան քաղաքականութիւնը փորձեց պաշտպանել երկրագործութեան մինիստր Պոդբիելսկի, բացատրելով [illegible] մասնաժողովի գործունէութիւնը [illegible] կառավարութեան գործը [illegible] Նրա լեհական քաղաքականութիւնը»։

—«Daily Express» լրագրին հաղորդում են Բրիւսելից, թէ [illegible] բօերներին խաղաղութեան հետեւեալ պայմանները, —տալ բօերներին [illegible] իրաւունքներ [illegible] Կապի գաղթականութեան [illegible] 10 միլիոն ֆունտ [illegible] բոլոր [illegible]։

—Եւրոպական լրագրները հաղորդում են, թէ [illegible]։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

30 ապրիլ

ՏԱԳԱՆՐՕԳ։ Այսօր անցաւ Շահը։

ԵՐԵՒԱՆ։ Ալէքսանդրօպօլում բացվեց քաղաքային հասարակական բանկ։

ՎԱՐՇԱՎԱ։ Վարշավայում հիմնվում է ճիշդ եւ գործադրական գիտութիւնների ընկերութիւն յանուն բժշկապետ Նէնցկու, որ վախճանվեց Պետերբուրգում։

ՊԵԿԻՆ։ Չինական կառավարութիւնը յայտնեց, որ Պէչիլիի նահանգում երկու օր տեւող կռիւներում ապստամբները ջարդվեցին եւ նրանց պարագլուխները բռնվեցին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Երէկ, ապրիլի 29-ին, Ցարսկոե-Սելօ գնացին այն տնայնագործ-էկսպօնէնտները, որոնք ցանկութիւն յայտնեցին մատուցանել ցուցահանդէսի Օգոստափառ Հովանաւորողուհուն սուրբ պատկեր ի նշան շնորհակալութեան իրանց ցոյց տուած բարերարութեան՝ ցուցահանդէս կազմակերպելով։ Տնայնագործները եւ տնայնագործուհիները, թւով 26 մարդ, ժամանեցին Ցարսկոե-Սելօի Ալէքսանդրօվսկի պալատը։ Շուտով բարեհաճեցին դուրս գալ Նոցա Կայսերական Մեծութիւնները Թագաւոր Կայսրը եւ Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդօրօվնա։ Տնայնագործուհիները բաղդ ունէին մատուցանելու Թագուհուն Աւետման պատկերը։ Թագաւոր Կայսրը եւ Թագուհի Կայսրուհին արժանացրին տնայնագործներից եւ տնայնագործուհիներից շատերին ողորմած հարց ու փորձերի, բաղդաւորեցնելով հայրենիք աջողութեամբ վերադառնալու բարեմաղթութեամբ եւ յանձնարարելով յայտնել համագիւղացիներին Նոցա Կայսերական Մեծութիւնների ողջոյնը։

«Օրէնքների Ժողովածուի» մէջ հրատարակված են հրամաններ, որոնցով Պօլտավա քաղաքին թոյլատրվում է մէկ միլիօն օբլիգացիական փոխառութիւն անել. ժողովրդական լուսաւորութեան մինիստրին իրաւունք է տրվում թոյլատրել արտասահմանեան համալսարաններում բժշկապետի կոչում ստացած կանանց բժշկի քննութիւն տալ Պետերբուրգի իգական բժշկական ինստիտուտին եւ բժշկական ֆակուլտէտներին կից յանձնաժողովներում եւ պետական $4^0/_0$ րէնտային 247-դ սէրիան հրատարակելու մասին տասը միլիօն րուբլու։

1 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետերբուրգի նահանգի ժողովրդական դպրոցների դիրեկտոր Լատիշէվ նշանակված Պետերբուրգի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի օգնական։—Մոսկվայից Պետրօպավլօվսկի տաճարը բերված երկու պսակները—արծաթէ եւ մետալական, որոնց անցեալ փետրվարի 19-ին բանւորները դրել էին Ազատարար-Թագաւորի արձանի պատւանդանի վրա Մոսկվայում, Թագաւոր Կայսրի կամքի համաձայն, դրվեցին ապրիլի 24-ին անմոռանալի Ազատարար-Թագաւորի դամբարանի վրա։

ՊԱՐԻԶ։ Լուբէ, ուղեկցութեամբ մինիստր Դելկասէի, գեներալ Դիւբիւայի, օֆիցէրների եւ պաշտօնեաների այսօր ճանապարհ ընկաւ Բրէստ, ուր կը նստի «Մանկալմ» կրէյսէրի վրա, ուղեկցվելով ծովային դիվիզիայով, փոխ-ծովապետ Ռուստանի հրամանատարութեամբ։ Սէն-Լազար կայարանում ժողովվեցին բոլոր մինիստրները, գեներալները, պաշտօնական աշխարհի բարձրաստիճան ներկայացուցիչները եւ մեծ ամբոխ. լսվում էին բացականչութիւններ. «Կեցցէ Ռուսաստանը։ Կեցցէ Ֆրանսիան»։ Ռուսական դեսպանութեան անդամները ուղեկցում էին Լուբէին մինչեւ Բրէստ։

ՊԱՐԻԶ։ Լուբէ ճանապարհ ընկաւ 9 ժամ 3 րոպէին Բրէստ, որտեղից ծովով կերթայ Ռուսաստան։

ՍԱՆՏԱ-ԼԻՒՉԻԱ։ Ս. Վինցենտի կղզու վրա, ասում են, որ լավայի արտավիժումն սկսվելու րոպէին, սպանվել են 1600 մարդիկ։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչեների հաղորդած տեղեկութիւնների համեմատ, Դէլարէյի զօրքերը երկուամսվայ ընթացքում, անգլիական գործողութիւնների պատճառով, 860 մարդկանցով պակասեցին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Շէնադէն կայարանի վրա կէրօսինով լիքը վագօնի պայթիւնից սպանվեցին 20 մարդիկ, մահացու կերպով վիրաւորվեցին 150 մարդ եւ 50 հոգի—թեթեւ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ազնուական բանկի խաղարկութեան տոմսերի 25-դ տիրաժի ժամանակ, դումարներ տարան հետեւեալ տոմսերը.—երկու հարիւր հազար—01567/18. եօթանասուն եւ հինգ հազար—02289/12. քառասուն հազար—11719/49. քսան եւ հինգ հազար—10679/44. տասը հազարական — 15859/1, 15568/27, 07724/7. ութհազարական—10664/46, 1[illegible]270/16, 09342/5, 07853/28, 01655/28. հինգ հազարական—06625/45, 15830/23, 13643/21, 11668/6, 08668/49, 05334/17, 14564/37, 05732/44. հազարական—14602/3, 01851/26, 12667/22, 08269/25, 07087/4, 14574/3, 01605/4, 00155/38, 04816/36, 00880/31, 14411/14, 10523/12, 01245/12, 13753/14, 02087/2, 04422/39, 05247/48, 02475/29, 13657/29, 01034/42։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴԷՈՍԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱՊԵՏ
ԳԷՈՐԳ ԹԱԴԷՈՍԵԱՆ
Նախկին տարիների նման, այս տարի եւս կընդունի հիւանդներ Կովկասեան հանքային ջրերում (Էսսէնտուկիում)։ 1—10

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Երեքշաբթի, մայիսի 7-ին, հայոց խմբի դերասան
Օ. ԱԲԵԼԵԱՆԸ
Մասնակցութեամբ օր. Ա. Խիթարեանի. բարեհաճ մասնակցութեամբ իշխ. Ս. Վ. Արղութեանի, Մ. Յ. Մէլիք-Կարագեօզեանի, Վ. Տ. Խանդամիրեանի, Ն. Լ. Օհանեանի. պ.պ. Մ. Ն. Աթաբէգեանի, Ա. Յ. Խատիսեանի, Ա. Յ. Մինասեանի, Ա. Մ. Շիրվանզադէի եւ Ա. Ս. Զըմըշկեանի
կը ներկայացնէ
ԵՒԳԻՆԷ
Կոմեդիա 3 արար. հեղ. Ա. Մ. Շիրվանզադէի։
Սկիզբն է $8^1/_2$ ժամին։
Տոմսակները վաճառվում են կասսայում։

ՊԵԱՏԻԳՕՐՍԿ
ԲԺԻՇԿ Ք. ԳԱՆՋՈՒՄԵԱՆ
Ընդունում է հիւանդներին բոլոր տարին
Առաւօտեան . . . . . $9^1/_2$—12
Երեկոյեան. . . . . . 5 — 7
(չ. շ.) 2—16

ԳՆՈՒՄ ԵՄ
պօստային մարկաներ (բանեցրած) Պարսկաստանի եւ Տաճկաստանի։ Դիմել՝ Баку, Мирза-Авакову, Михайловская, 8. Կամ Bacou, Mirza-Awakoff, rue Mikaïlowski, 8։ 10—10

Առաջնակարգ հիւրանոց
„ԱՎՐՈՐԱ“
(Նախկին Ռադժիի)
նոր բացված
Թիֆլիսի կենտրոնում, Միքայէլեան հրապարակ, № 29 իշխան Վորոնցովի արձանի մօտ։
Համարները՝ սկսած մի րուբլուց։
Ճաշարան. պարտէզ.
Խոհանոցը՝ ֆրանսիական եւ տեղական։
Գինիներ՝ արտասահմանեան եւ տեղական։
Հիւրանոցում կայ վաննա եւ դուշ։
Տելեֆօն № 800։
(ե. հ. կ.) 7—10

ԲԺՇԿԱՊԵՏ
ՄԻՆԱՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ
(ՄՈՍԿՎԱՅԻՑ)
նախկին տարիների նման, ընդունում է հիւանդներին՝ Կովկասի հանքային ջրերում—Պեատիգօրսկում, մայիսի 1-ից։
(չ. կ.) 4—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Օր. Սաթենիկ
ՏԵՐՄԱՋԱՆԵԱՆՑ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ
Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյեան ժամը 5—7
Վանքի մեծ փողոց, տուն Մարտիրոսեանցի։
(ե. կ.) 52—60

Քութայիսի քաղաքային ջրանցքի եւ էլէկտրական տրամվայի ընկերութիւնների վարչութիւնը,
ի նկատի ունենալով, որ հասնում է պայմանաժամը (ներկայ տարվայ մայիսի 1-ին), երբ պէտք է մուծվեն Ընկերութեան I եւ II սերիաների անդորրագրերի նախնական վճարները, սրանով յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ հերթական վճարները կընդունվեն Քութայիսում, Ընկերութեան գրասենեակում, նոյնպէս եւ Քութայիսի Փոխադարձ կրէդիտի Ընկերութեան մէջ եւ Թիֆլիսում—Գիւղատնտեսական փոխադարձ կրէդիտի ընկերութեան մէջ։ Ընկերութեան իսկական եւ սկզբնական (III սերիայի) փայական անդորրագրերը կարելի է ստանալ Քութայիսում—1) Ընկերութեան Գրասենեակում, 2) Փոխադարձ կրէդիտի Ընկերութեան Վարչութեան մէջ, 3) Միխայլօվսկի Ազնուական կալուածական բանկի կասսիրի մօտ եւ 4) Մարգանէցաարդիւնաբերողների Համաժողովի Խորհրդի քարտուղար Ա. Տ. Նանէյշվիլի մօտ. Թիֆլիսում—1) Գիւղատնտեսական Փոխադարձ Կրէդիտի Ընկերութեան Վարչութեան մէջ եւ 2) Ընկերութեան Վարչութեան անդամների՝ իշխան Ր. Տ. Ամիրէջիբիի, Ա. Ա. Բաքօվի, եւ իշխան Գ. Ն. Դիասամիձէի մօտ. Բաթումում—Փոխադարձ Կրէդիտի Ընկերութեան Վարչութեան մէջ. Փօթիում—Փոխադարձ Կրէդիտի Վարչութեան մէջ եւ Ջիատուրիյում—Մարգանէցա-արդիւնաբերական Փոխադարձ Կրէդիտի Վարչութեան մէջ։ 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ
Գտնվում է ֆինանսների մինիստրութեան իրաւասութեան տակ։ Ուսումնարանը հիմնված է Թիֆլիսի վաճառականական դասակարգից. դասընթացը եօթամեայ է։ Առաջին դասարանը ընդունվում են առանց քննութեան քաղաքային ուսումնարաններում աւարտած աշակերտները (1872 թ-ի կանոնադրութեան համաձայն)։ Ուսման վարձը տարեկան 80 րուբլի է։
Դասընթացքը աւարտողների իրաւունքները.—անձնական պատւաւոր քաղաքացու կոչումն հինգ տարի առեւտրական հիմնարկութիւնների մէջ ծառայելուց յետոյ։ Պետական ծառայութեան մէջ՝ քաղաքացիական առաջին աստիճան ստանալու իրաւունք, առանց քննութեան։ Զինուորագրութեան մէջ—երկրորդ կարգի արտօնութիւններ։
Ուսումնարանը կը բացվի 1902 թ-ի սեպտեմբերի 17-ին։ Ուսման սկիզբը՝ սեպտեմբերի 18-ին։ Ուսումնարանի բնակարանը—Նիկօլաեվսկայա հրապարակ, № 23, տուն Զաւրիեվի։
Խնդիրքները—մետրիկական, կոչման եւ ծաղկի պատուաստման վկայականների հետ միասին ընդունվում են Թիֆլիսի առեւտրական ուսումնարանում ամենայն օր մինչեւ օգոստոսի 1-ը։
Ուսումնարանը ժամանակաւորապէս կառավարում է Թիֆլիսի առեւտրական դպրոցի դիրեկտորը։ 5—7

1877 թ. 1882 թ. 1886 թ. 1896 թ.
Պ. Ա. Սմիռնովի Ընկերութիւնը Մօսկվայում
հաղորդում է ի տեղեկութիւն իր յարգելի գնողների, որ բարձր յատկութեան ՍԵՂԱՆԻ ԳԻՆԻ, Կովկասեան բնական ԿՕՆԵԱԿ, օղիներ եւ լիկեօրներ կարելի է գնել բոլոր խանութներում, իսկ մեծ քանակութիւններով, Մօսկվայի գներով, աւելացնելով միայն ճանապարհածախսը—ԵՂԲ. ԱԳՐԻԱՆՆԵՐԻ պահեստից, Բագւում, Քալանթարօվի պասաժում։
Պարսկաստանի բոլոր քաղաքների համար յիշեալ ապրանքները ուղարկվում են ակցիզը դուրս եկած։
(կ. հ.) 11—20

Кёлерскіе Z-Духи.
Какъ буква Z послѣдняя въ алфавитѣ, такъ эти духи представляютъ послѣднее слово парфюмернаго искусства; Кёлерскіе Z-Духи, несмотря на нѣжность своего аромата, очень сгущены, а потому при употребленіи сохраняютъ свой прелестный запахъ въ теченіи нѣсколькихъ сутокъ.
ПРОДАЖА ВЕЗДѢ ВЪ ЛУЧШИХЪ МАГАЗИНАХЪ.

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“
ԿՕՆՖԷՏԻ ԵՒ ՇՕԿՕԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսում մեր պատրաստած ապրանքները արժանացան—
Կովկասում կօնֆէտի արդիւնաբերութեան
ՄԻԱԿ ՄԵԾ ԱՐԾԱԹԵԱՅ ՄԵԴԱԼԻ
Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱԹ-ԼՕԽՈՒՄ, կարամէլ «ԻՒԲԻԼԷՅՆԱՅԱ» եւ առհասարակ բարձր յատկութեան կարամէլներ մրգեղէնով։
Գործարանում աշխատում են մայրաքաղաքի նշանաւոր վարպետներ։
Պատուէրներով դիմել. Թիֆլիս, Պավլօվսկայա փողոց, սեփական տուն
Գործարանի հեռախօս № 362, գործարանական խանութինը № 772։
42—100 (հ. կ.)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԼԷՕ
ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում
ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ
XVIII ԴԱՐ
Առաջին մաս
ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ 50 ԿՕՊԷԿ
Ծախվում է. հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը։ Հասցէն՝ Тифлисъ, Редакція Мшакъ". «Գուտտենբէրգ» գրավաճառանոցում։ Հասցէն՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенбергъ".
Նոյն տեղերում ծախվում են նոյն հեղինակութեան ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ մնացած օրինակները։ Գինը 1 րուբլի 50 կօպէկ։

Дозволено Цензурою, Тифлисъ, 1 Мая 1902 г.
Электропечатня Груз. Издат. Т—ва. Б.-Ванксия 11.